ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1961 Общественные науки

ԴԻՑԱԿԱՆ ԷՐԱՑՈՒ

ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ

(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

1961 թվականի նոյեմբերին լրացավ ականավոր բոլշևիկ, հասարակական գործիչ և գրականագետ-ակադեմիկոս Արտաշես Բալասանի Կարինյանի ծննդյան 75-ամյակը։

Ա. Բ. Կարինյանը իրավամբ պատկանում է լենինյան հին դվարդիայի այն գործիչների թվին, որոնք հոկտեմբերի արշալույսից դեռ շատ առաջ մտնելով Կոմունիստական պարտիայի շարքերը, իրենց ամբողջ գիտելիքները, կյանքն ու անսպառ եռանդը տրամադրել են բանվոր դասակարգի ազատագրության վեհ պայքարին և այսօր էլ ակտիվ մասնակցություն են ցուցաբերում կոմունիզմի հոյակապ շենքի կառուցմանը։

Նա ծնվել է Բաքվում, բանվորի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է Բաքվի առաջին գիմնազիայում և ապա ընդունվել ու հաջող կերպով ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։

Ա. Կարինյանը իր հասարակական-քաղաքական կյանքն սկսել է շատ վաղ հասակից, երբ տակավին աշակերտ էր և ղեկավար մասնակցություն էր ունենում աշակերտական անլեգալ ռևոլյուցիոն ժուռնալների խմբագրմանը, մասնակցում ընդհատակյա խմբակների գործունեությանը։

Ա. Բ. Կարինյանը անցել է ռևոլյուցիոն գործիչի մեծ ճանապարհ։ Արդեն 1906 թվականին Կարինյանը հանդես է գալիս սոցիալ-դեմոկրատական մամուլի էջերում՝ բոլշևիկյան հայերեն առաջին լեգալ «Կայծ» թերթում տպագրվում է նրա «Բաքվի նորագույն անարխիստների մասին» հոդվածը։

Ա. Կարինյանի ռևոլյուցիոն գործունեության մեջ խոշոր դեր է կատարել Ստ. Շահումյանը, որի հետ նա ծանոթացել է 1907 թվականին։ Ստ. Շահումյանի և ապա Ս. Սպանդարյանի, Ա. Ջափարիձեի, Վ. Կասպարովի ու ականավոր այլ լենինյանների գաղափարական ազդեցության տակ Ա. Կարինյանը հաստատ կերպով կանգնում է մարքսիզմի դիրքերում և դառնում կովկասյան բոլշևիկների ակտիվ գործիչներից մեկը։

1907 թվականին նրան, կովկասյան մի խումբ ուսանողների հետ միասին, բախտ է վիճակվում Ֆինլանդիայի Տերոիկի քաղաքում, ՌՍԴԲՊ Պետրոգրադի Կոմիտեի կողմից կազմակերպված բոլշևիկների ժողովում առաջին անգամ տեսնել ու լսել Վ. Ի. Լենինին։

1907—1910 թվականներին Կարինյանը մի շարք անգամ լինում է Բաքվում, մասնակցում բոլշևիկների մեջ տարվող ռևոլյուցիոն աշխատանքներին, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք ծավալում նրանց շրջանում։ Նա միաժամանակ սերտ շփում է ունենում Ստ. Շահումյանի, Վ. Կասպարովի և այլ ականավոր բոլշևիկների հետ։ 1908 թվականից սկսում է թղթակցել «Կավկազսկի ռաբոչի» թերթին, որի խմբագիրներն էին այդ ժամանակ Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Ս. Սպանդարյանը և ուրիշներ։

Ռուսական առաջին ռևոլյուցիայից հետո ամբողջ երկրով մեկ մոլեգնեց ստոլիպինյան ռեակցիան։ Նա իր արտահայտությունը գտավ նաև գաղափարախոսության և այդ թվում գրականագիտության ասպարեզում։ Բոլշևիկները, պայքարելով ստոլիպինյան ռեակցիայի դեմ բոլոր ուղղություններով, լուրջ ուշադրություն են դարձնում նաև բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարին։

Բուրժուական նացիոնալիզմի դեմ գաղափարական պայքարն ուժեղացնելու և հայ բանվորներին ու գյուղացիներին մարքսիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու նպատակով, Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ 1911 թվականին լույս է տեսնում գրական-հասարակական «Նոր խոսք» ժուռնալը, որի խմբագրական կոլեգիայի անդամ է դառնում նաև Ա. Կարինյանը։

Այս փաստը բավական է գնահատելու այն մեծ վստահությունը, որ տածում էր Ստ. Շահումյանը Արտ. Կարինյանի նկատմամբ՝ արդեն 1910 թվականին։ «Նոր խոսքի» էջերում Ստ. Շահումյանի, Ստոպանու և ուրիշների հետ միասին տեսական որոշակի արժեք ներկայացնող մի շարք հոդվածներով հանդես է գալիս նաև Արտ. Կարինյանը, որոնցում նա մարքսիստական դիրքերից քննարկում է հայ գրականության ժամանակակից հարցերը։ Կարինյանը էական ավանդ է ներմուծում բոլշևիկյան հայ ժուռնալիստիկայի ստեղծման գործում։

Իր գրական-հասարակական գործունեությանը զուգընթաց, բոլշևիկ հրապարակախոսը ակտիվ մասնակցություն է ունենում բանվորների շրջանում տարվող ռևոլյուցիոն պրակտիկ աշխատանքին։ Նա անխոնջ պայքարում է հայ, ռուս, ադրբեջանցի, վրացի և Կովկասում բնակվող այլ ազգերի բանվորների ու գյուղացիների ինտերնացիոնալ համախմբման համար։ Արտ. Կարինյանը եղել է և իր ամբողջ էությամբ մնում է որպես բոլշևիկ-ինտերնացիոնալիստ։

Արտ. Կարինյանի ռևոլյուցիոն գործունեությունը աննկատ չի մնում ցարական ինքնակալությանը։ 1913 թվականին ոստիկանությունը մի խումբ բոլշևիկ բանվորների հետ միասին ձերբակալում է նաև Արտ. Կարինյանին, նետում բանտ և ապա արտաքսում Բաքվից ու Կովկասից։ Ցարական իշխանությունները հինգ տարով արգելում են նրան ապրել Կովկասի սահմաններում։

Ռեպրեսիաները, բանտն ու աքսորը չեն ընկճում հավատարիմ լենինյանի կամքը։ Նա շարունակում է իր ռևոլյուցիոն պայքարը՝ էլ ավելի մեծ ատելությամբ լցված ցարական ինքնակալության դեմ։ 1914 թվականին Կարինյանը «Պրավդա»-ի էջերում հանդես է գալիս մի շարք հոդվածներով ու ռեցենզիա-

ներով։ Ուշագրավ են հատկապես նրա հոդվածները Մաքսիմ Գորկու պատմվածքների, պրոլետարական գրողների ժողովածուի և այլ հարցերի մասին։

«Պուտ Պրավդի» թերթի հավելված «Ռարոչի» ժուռնալի № 2-ում 1915 թվականին տպագրած «Պրոլետարական գրողների ժողովածուի մասին» ընդարձակ գրախոսականում Ա. Կարինյանը սուր ծաղրի է ենթարկում դեկադենտներին, որոնց համար կապիտալիստական հասարակությունը հանդիսանում է «հավերժական» իրավակարգ՝ անսասան հիմքով։ Ցույց տալով, որ «մեռնող դասակարգերի բոլոր արվեստագետների մոտ անզուսպ սեռական խրախճանքի և անասնական կյանքի քարոզը միշտ զուգորդվել է մռայլ հոռետեսության և ինքնասպանության քարոզի հետ», Արտ. Կարինյանը բացահայտում է, որ բոլորովին այլ է մարտնչող հասարակարգի խավերի հոգերանությունը, պրոլետարական խավերի հոգեբանությունը, որ «պրոլետարիատի գաղափարախոսությունը միակ առաջավոր գաղափարախոսությունն է, որովհետև պրոլետարիատը ձգտում է՝ հենվելով հասարակական զարգացման օրենքների վրա, վերակառուցել ամբողջ հին աշխարհը»։

1916 թվականին Կարինյանը ակտիվ կերպով աշխատակցում է հայկական սոցիալ-դեմոկրատական պարտվողական «Պայքար» թերթին, որտեղ տպագրում է մի շարք հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ։ 1917 թվականի առաջին կեսը Կարինյանը նորից անց է կացնում Պետրոգրադում, քայլում ցարական ինքնակալությունը տապալողների շարքերում։ Նրան մեծ բախտ է վիճակվում 1917 թ. ապրիլին լինել ֆինլանդական կայարանում, լսել մեծ Լենինի հոչակավոր ճառը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը նոր ուժ ու եռանդ է հաղորդում ականավոր ռևոլյուցիոներին։ Նա բուռն խանդավառությամբ մասնակցում է մեծ Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելու և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակն Անդրկովկասում ապահովելու համար մղված պայքարին։ 1917 թ. աշնանը Արտ. Կարինյանը նորից գալիս է Բաքու։ Սկսվում է նրա կյանքի ու պայքարի նոր, փայլուն էտապը։ Ստ. Շահումյանի և Ա. Ջափարիձեի առաջարկով Կարինյանը ընտրվում է «Բանվորների և զինվորների դեպուտատների Բաքվի Սովետի տեղեկագրի» խմբագիր։ Այդ թերթը, ինչպես հայտնի է, խոշոր դեր է կատարել ոչ միայն Բաքվի, այլև ամբողջ Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի կազմակերպման գործում։

Արտ. Կարինյանը Բաքվի Սովետի և նրա Գործադիր Կոմիտեի անդամ էր, Պարտիայի Բաքվի Կոմիտեի անդամության թեկնածու։ 1918 թվականի ապրիլին ստեղծվում է Բաքվի Ժողկոմսովետը՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ։ Արտ. Կարինյանը ընտրվում է Բաքվի Ժողկոմսովետի Արդարադատության կոմիսար և ակտիվ մասնակցություն է ունենում Կոմունայի գործունեությանը։ Նա այս շրջանում հանդես է գալիս բազմաթիվ հոդվածներով։

Ուշագրավ է Արտ. Կարինյանի «Քաղաքային ինքնավարությունը և դեմոկրատիան» բրոշյուրը, որը հեղինակը գրել է Ստ. Շահումյանի հանձնարարությամբ և հրատարակել է 1917 թվականին Բաքվում։ Այդ բրոշյուրում բանվորների համար մատչելի լեզվով հեղինակը սուր քննադատության է ենթարկում ցարական ինքնակալությունն ու կովկասյան քաղաքների դումաները, որտեղ նստածները մտածել են ոչ թե ժողովրդի շահերի մասին, այլ օգտագործել են իրենց դիրքերը աշխատավոր ժողովրդին շահագործելու, նրան հարստահարե-

լու և նրա հաշվին իրենց գրպաններն ուռճացնելու համար։ Կարինյանը այնուհետև ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի իսկական ժողովրդական քաղաքային ինքնավարությունը, որտեղ կարող են ընտրվել միայն ժողովրդի ներկայացուցիչները, և որոնք ծառայելու են միայն ժողովրդի բարօրությանը։ «Քաղաքային ինքնավարությունը,—գրում է Ա. Կարինյանը,—միմիայն այն պարագայում կարող կլինի բավարարություն տալ ժողովրդական լայն տարրերի կարիքներին, երբ ինքը, պետությունը կօգնի նրան ու կօժանդակի» (էջ 30)։ Այս բրոշյուրը ժամանակին որոշակի դեր խաղաց քաղաքի աշխատավոր մասսաների դասակարգային ինքնագիտակցության բարձրացման գործում։

Բաքվի կոմունայի անկումից հետո Արտ. Կարինյանը աշխատում է Մոսկվայում՝ Ազգությունների ժողովրդական կոմիսարիատին կից Հայկական Գործերի Կոմիսարիատում, մասնակցում է հայերեն «Կոմունիստ» ժուռնալի խմբագրմանը և ապա խմբագրում է «Կարմիր դրոշ» թերթը։

Հետագայում Պարտիայի Կենտկոմի հանձնարարությամբ, որպես քաղաքական կոմիսար, աշխատում է Մ. Կալինինի անվան «Սովետական Կովկաս» ագիտ-հրահանգչական գնացքում, որը գործում էր Կովկասի ազատագրված վայրերում։

Հաջողությամբ կատարելով պարտիայի այդ պատասխանատու հանձնարարությունը, նա վերադառնում է Մոսկվա և ՌԿ(բ)Պ Կենտկոմի հանձնարարությամբ մեկնում Պետրոգրադ, որտեղ ղեկավարում է Նարվա-Պետրոգրադյան շրջանի պարտիական դպրոցը։

1921 թվականի վերջերին Արտ. Կարինյանը գործուղվում է Հայաստան, որտեղ ընտրվում է ՀԿՊ Կենտկոմի անդամ։ Պարտիայի հանձնարարությամբ Արտ. Կարինյանը որոշ ժամանակով մեկնում է արտասահման՝ գաղութահայության մեջ աշխատանք տանելու համար։ Նա լինում է Թուրքիայում, ապա Ամերիկայի Միացյալ Նահանգների մի շարք քաղաքներում։

Սովետական Հայաստանում Արտ. Կարինյանը երկար տարիներ վարել է պարտիական-սովետական ղեկավար պաշտոններ, եղել է ՀՍՍՌ Կենտգործկոմի նախագահ։ Նա բազմաթիվ անգամ ընտրվել է ՀԿՊ Կենտկոմի անդամ, ՀՍՍՌ Կենտգործկոմի, ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի, Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի Նախագահության անդամ։

1928 թվականից հետո, երբ Արտ. Կարինյանը ազատվում է ՀՍՍՌ Կենտգործկոմի նախագահի պարտականություններից, տեղափոխվում է Թբիլիսի, որտեղ 1929—30 թվականների ընթացքում խմբագրում է «Անդրկովկասի ժողովրդական տնտեսություն» ժուռնալը։ Հետագայում Կարինյանը նորից վերադառնում է Հայաստան, որոշ ժամանակ խմբագրում է «Նոր ուղի» ժուռնալը, իսկ ավելի ուշ նշանակվում է Լուսավորության ժողկոմի տեղակալ, իսկ հետագա տարիներին զբաղվում գրականագիտության հարցերով։

Ա. Կարինյանի գրչին են պատկանում բազմաթիվ հոդվածներ, որոնք տպագրվել են նախասովետական բոլշևիկյան մամուլում, բրոշյուրներ ու մենագրություններ։ Դրանց թվում «Քաղաքային ինքնավարությունը և դեմոկրատիան» (Բաքու, 1917 թ.), «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը» (1924 թ.), «Հայ ազգայնականների ուղին» (1926 թ.), «Անդրկովկասը 1905 թվին» (1927 թ.), «Դաշնակցությունը և իր զինակիցները» (1932 թ.), «Նավթը և հայկական հարցը» (1929 թ.) և այլ աշխատություններ։ 1934 թվականին հրատարակվեց Արտ. Կարինյանի երկերի ժողովածուն, որտեղ տեղ են գտել

ռուսական և հայ բոլշևիկյան մամուլի էջերում հեղինակի տպագրած հրապարակախոսական հոդվածները։

1956 թվականին լույս տեսավ Արտ. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» չորսհատորյակի առաջին հատորը, իսկ 1960 թ. 2-րդ հատորը։ Այս միանգամայն ուշագրավ մենագրության առաջին հատորում հեղինակը մեր պատմագրության մեջ առաջին անգամ գիտական լուրջ և հաջողված փորձ է կատարում հնդկահայ պարբերական մամուլի պատմական տեսություն տալու ուղղությամբ, իսկ երկրորդ հատորում բնութագրվում են գաղութահայ այն պարբերականները, որոնք լույս են տեսել Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվականները։ Այստեղ հեղինակը քննական վերլուծության է ենթարկում մասնավորապես Վենետիկում, Վիեննայում, Փարիզում և Մանչեստրում հրատարակված հայ պարբերականները։ Այս աշխատության գիտական հասարակական արժեքը հատկապես ընդգծելի է այն փաստով, որ ակադեմիկոս Կարինյանը կարողացել է բազմակողմանիորեն ցույց տալ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների կապը Վատիկանի կաթոլիկական կղերապետության հետ և գնահատելով նրանց պարբերականները, միաժամանակ մերկացրել է նրանցում ցայտուն կերպով նրշմարվող կաթոլիցիզմը։ Մենագրության 3-րդ հատորը, որի լույս ընծայմանը սպասում է մեր հասարակայնությունը, պարունակելու է Թուրքիայում և Ռուսաստանում լույս տեսած հայ պարբերականների բնութագիրն ու տեսությունը։

Ականավոր գիտնականի մեծ վաստակը բարձր է գնահատվում գիտական հասարակայնության կողմից։ Նա ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ է և այժմ հաջողությամբ աշխատում է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայում որպես հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար։

Կարինյանը հասարակական խոշոր գործիչ է։ Նա լենինյան մրցանակաբաշխության կոմիտեի անդամ է։ Մեր պարտիան և կառավարությունը բարձր գնահատելով Արտ. Կարինյանի ծառայությունները, նրան պարգևատրել է կառավարական շքանշաններով ու մեդալներով։

1961 թվականի սեպտեմբերին ՀԿՊ 22-րդ համագումարը Կարինյանին ընտրեց ՀԿՊ Կենտկոմի անդամ։ Նա միաժամանակ ղեկավարում է Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի ժուռնալիստիկայի սեկտորը և խոշոր ծառայություններ ունի երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում։ Չի կարելի առանց շնորհակալության նշել այդ փաստը։ Նա ժամանակ է գտնում լսելու և օգնելու բոլոր նրանց, ովքեր նրա օգնության կարիքն են զգում։

Չնայած իր պատկառելի տարիքին, Ա. Կարինյանն ապրում է իր ուժերի ծաղկման էտապում և մեր հասարակությունը նրանից ունի մեծ սպասելիքներ՝ մեր գիտության և կուլտուրայի զարգացման գործում։

Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ

* * *

ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի նիստերի դահլիճում կայացավ երեկո նվիրված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, հին բոլշևիկ, ականավոր հասարակական գործիչ և գրականագետ Արտաշես Կարինյանի ծննդյան 75-ամյակին։

Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտոր, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ս. Աղայանի բացման խոսքից հետո Արտաշես Կարինյանի հասարակական-գրականագիտական գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ ֆիլիալի դիրեկտորի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու Գ. Գալոյանը։

Հոբելյարին ողջունեցին՝ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության կողմից՝ ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը, Երևանի Շահումյանի անվան դպրոցի պիոներների անունից՝ պիոներ Ս. Մուրադյանը, Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի կոլեկտիվի կողմից՝ ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանը, Երևանի Պետական համալսարանի ռեկտորատի, պարտիական կոմիտեի և կոլեկտիվի կողմից՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Գաբրիելյանը, ՀՍՍՌ Գրողների միության վարչության անունից՝ հին բոլշևիկ Ա. Վարդանյանը, ռեսպուբլիկայի ժուռնալիստների միության կողմից՝ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի խմբագիր Ա. Երիցյանը, ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոլեկտիվի անունից՝ ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Ռ. Առաքելյանը, Մ.Լ.Ի-ի Հայկական ֆիլիալի կոլեկտիվի անունից՝ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ներկարարյանը, Արվեստի ինստիտուտի կոլեկտիվի կողմից՝ արվեստագիտության թեկնածու Մ. Մուրադյանը, հին բոլշևիկներ Ա. Աղամալյանը, Ա. Թումանյանը և ԳԱ «Տեղեկագրի» (հաս. գիտ.) խմբագրության կողմից՝ պրոֆեսոր Գ. Աբովը։

Երեկոյում հրապարակվեց ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանի ողջույնի շնորհավորագիրը։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի անունից հոբելյարին ողջունեց և ստեղծագործական նորանոր հաջողություններ ցանկացավ ՀԿՊ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Վ. Ավետիսյանը։

Ա. Բ. Կարինյանի ծննդյան 75-ամյակի առթիվ ստացված բազմաթիվ հեռագրերի մի մասը հրապարակվեց։

Վերջում հուզիչ խոսքով հանդես եկավ անվանի գիտնականը։

—Շնորհակալություն այն ջերմ խոսքերի համար,—ասաց նա,— որ ասվեցին իմ հասցեին։ Ես անչափ երջանիկ եմ զգում նրա համար, որ իրականացած եմ տեսնում այն լավագույն երազանքը, որի համար մարտնչել է բոլշևիկյան պարտիայի հին գվարդիան, որի շարքերում աճել ու դաստիարակվել եմ ես։ Իմ ուժերն ու գիտելիքները այսուհետև ես չեմ խնայի իմ հարազատ ժողովրդին ծառայեցնելու գործում։